ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Թուրքմենստանի Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

առաջնորդվելով իրավահավասարության եւ երկու պետությունների ազգային շահերը փոխադարձաբար հարգելու սկզբունքներով,

համոզված լինելով, որ գիտատեխնիկական համագործակցությունը երկկողմ հարաբերությունների կարեւոր բաղկացուցիչ մաս է,

ընդունելով գիտության, տեխնոլոգիաների եւ նորարարության ոլորտներում համագործակցության անհրաժեշտությունը,

նկատի առնելով, որ այդպիսի համագործակցությունը կնպաստի երկու պետությունների միջեւ երկկողմ փոխշահավետ կապերի ամրապնդմանը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը, իրենց պետության օրենսդրությանը եւ սույն Համաձայնագրին համապատասխան, կնպաստեն երկկողմ գիտատեխնիկական համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի շրջանակներում գիտատեխնիկական համագործակցության ուղղությունները կսահմանվեն՝ ելնելով երկու պետությունների գիտական, տեխնոլոգիական, նորարարական գործունեության զարգացման եւ գիտական գործունեության արդյունքները կիրառելու նպատակներից:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրով նախատեսված գիտատեխնիկական համագործակցությունը կիրականացվի երկու պետությունների նախարարությունների, կառավարման այլ մարմինների, գիտությունների ազգային ակադեմիաների, գիտահետազոտական գերատեսչությունների եւ կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, երկու պետությունների գիտնականների եւ մասնագետների միջոցով, նրանց իրավասության սահմաններում եւ նրանց միջեւ ուղղակի համաձայնագրերի եւ պայմանագրերի հիման վրա՝ Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կարող է իրականացվել հետեւյալ ձեւերով.

- Կողմ հանդիսացող պետությունների համար գերակա նշանակություն ունեցող՝ համատեղ գիտական, գիտատեխնիկական եւ նորարարական նախագծերի եւ ծրագրերի, ինչպես նաեւ հիմնարար հետազոտությունների իրականացում, դրանց փոխադարձ փորձաքննության անցկացում,
- գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համատեղ հրատարակում,
- համատեղ գիտահետազոտական աշխատակազմերի ձեւավորում, այդ թվում՝ դաշտային հետազոտություններ եւ գիտարշավներ, նորարարական եւ այլ տիպի ձեռնարկումներ, որոնք կապահովեն հետազոտությունների, մշակումների իրականացումը եւ նոր տեխնոլոգիաների իրացումը,
- գիտական կադրերի պատրաստում, աջակցություն կադրերի որակավորման քննության անցկացմանը, գիտնականների եւ մասնագետների փոխանակում,
- համատեղ սեմինարների, գիտաժողովների, աշխատանքային հանդիպումների եւ փորձաշրջանների կազմակերպման միջոցով գիտնականների եւ մասնագետների որակավորման բարձրացում:

Համագործակցությունը կարող է իրականացվել նաեւ փոխհամաձայնեցված այլ ձեւերով, որոնք կապահովեն սույն Համաձայնագրի իրականացումը:

Համագործակցության ձեւերն ընտրելիս եւ սահմանելիս Կողմերը ղեկավարվում են բացառապես երկու պետությունների եւ ազգերի գիտության, տնտեսության զարգացման եւ հասարակական առաջընթացի շահերով:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը կստեղծեն գիտատեխնիկական համագործակցության հարցերի համատեղ Հանձնաժողով:

Իր գործունեությունը կազմակերպելու նպատակով Հանձնաժողովը մշակում եւ հաստատում է աշխատանքային կանոնակարգ:

Հանձնաժողովի քննարկման առարկա պետք է դառնան գիտության, տեխնոլոգիաների եւ նորարարության բնագավառներում Կողմերի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող գերակա ուղղությունները, համագործակցության նոր ոլորտների եւ ձեւերի բացահայտումը, համատեղ ծրագրերի ձեւավորումը եւ համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակումը:

Սույն Համաձայնագրով սահմանված համագործակցության կազմակերպումն իրականացնում են՝ հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության կառավարման ոլորտում գործող գիտության պետական կոմիտեն, թուրքմենական կողմից՝ Թուրքմենստանի գիտությունների ակադեմիան:

ՀՈԴՎԱԾ 6

Հաշվի առնելով գիտական հետազոտությունների, փորձարարաշինարարական մշակումների բարձր մակարդակի պահպանման կարեւորությունը՝ Կողմերը կօժանդակեն նոր տեխնոլոգիաների փոխանակմանը, համատեղ ծրագրերի ու նախագծերի իրականացման ժամանակ հատուկ ուշադրություն կդարձնեն երկու պետությունների գիտնականների համար նորագույն եւ եզակի փորձարարական կայանքներից, սարքերից, սարքավորումից օգտվելու հարցում հասանելիության ապահովմանը, ինչպես նաեւ համագործակցության հիմունքներով կմասնակցեն դրանց մշակման, արտադրության եւ ձեռք բերման աշխատանքներին:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը պայմանավորվում են, որ համագործակցության ընթացքում ստացված՝ գիտական եւ գիտատեխնիկական տեղեկատվությունը, որը Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան բաց է հրապարակման համար, հասանելի կլինի համաշխարհային գիտական հանրությանը՝ ընդունված եղանակների օգտագործման շրջանակներում:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերը, հաշվի առնելով պետությունների օրենսդրությունները, ապահովում են մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, որը կարող է ստեղծվել սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության արդյունքում:

Մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների պաշտպանության եւ օգտագործման հարցերը կարգավորվում են սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված մարմինների եւ կազմակերպությունների միջեւ կնքված համաձայնագրերով՝ ելնելով Կողմերի պետությունների օրենսդրության պահանջներից:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք բխում են նրանց կողմից կնքված այլ միջազգային պայմանագրերից եւ համաձայնագրերից:

Սույն Համաձայնագրի դրույթներն իրականացվում են Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ եւ լրացումներ կատարվել Կողմերի փոխադարձ, գրավոր համաձայնության դեպքում:

Փոփոխություններն ու լրացումները ձեւակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մասը եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման ընթացքում Կողմերի միջեւ ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ երկու պետությունների օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից եւ գործում է հինգ տարի ժամկետով:

Սույն Համաձայնագրի գործողության ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ երկամյա ժամանակահատվածների համար, եթե Կողմերից որեւէ մեկը սույն Համաձայնագրի ժամկետի ավարտից վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին չի ծանուցում Համաձայնագիրը չեղյալ հայտարարելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի այն ծրագրերի եւ նախագծերի վրա, որոնք կարող են կնքված լինել նրա գործողության ընթացքում, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն:

Կատարված է ք.Երեւանում 2012 թվականի նոյեմբերի 29 -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն եւ ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն լեզվով տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2014թ. մարտի 4-ին